ՆԱԶԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԿԱՐԳԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ Հ.ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿՈՒՄ

Բառակազմական մի շարք երևույթներ առաջացել են հայոց լեզվի գրավոր շրջանում: Լեզվի քերականության ու բառակազմության կանոնները զարգանում են ոչ միայն նոր ձևերի ստեղծմամբ, այլև եղած հին ձևերի մեջ նոր իմաստների կամ առումների առաջացման միջոցով[1]:

Հայոց լեզվի պատմության մեջ 7-10-րդ դարերը համարվում են շրջադարձային: Եվ իրոք, հին հայերենը այդ դարերում զգալի փոփոխությունների է ենթարկվում: Լեզվական նոր երևույթներն ընդգրկում են ինչպես հայերենի բառապաշարը, նույնպես և քերականությունն ու հնչյունական կողմը: Հայերենի բառապաշարի մեջ կատարված տեղաշարժերը արտահայտվում էին՝

ա) Նոր, 5-րդ դարի գրականության մեջ անգործածական բառերով. ինչպես՝ կենցաղօգուտ, չափաբանութիւն, չափչգիտութիւն, մականուանական և այլն:

բ) Բառակազմական նոր հնարավորություններով՝ նախածանցներով:

Այդ դարերում առաջին անգամ որոշակի գործածվում են *աժ* վերջածանց ունեցող բառերը: Հին հայերենում նախդիրները շատ մեծ դեր են կատարել . նրանք գործածվելով տարբեր հոլովների հետ՝ արտահայտել են առարկաների մեջ ստեղծված բազմապիսի հարաբերություններ: Սակայն այդ նախդիրները 5-րդ դարից սկսած աստիճանաբար անհետանում էին, կամ կորցնում իրենց իմաստները և ձուլվում բառերին իբրև նախածանցներ: Գրաբարում իբրև մակբայ էր գործածվում *այլ* բառը: 7-րդ դարից սկսած այդ բառը գործածվել է նաև շաղկապի առումով[2]:

Ա. Այտընյանը արձանագրում է գրաբարի 7-10-րդ դարերի վիճակը, պնդում, որ գրաբարը այդ դարերում իրոք գրաբար էր, «այսինքն գրոց և գրագիտաց սեպհական մնացած լեզու»: Արձանագրելով գրաբարի գրոց լեզու դառնալու փաստը՝ Ա. Այտընյանը, սակայն, չի կարողանում նշել գրաբարի մա-

[1] Ս. Ղազարյան, «Հայոց լեզվի համառոտ պատմություն», Երևան, 1981, էջ 16:
[2] Նույնը, էջ 181:

հացման կամ ժողովրդի լայն հատվածներին անհասկանալի դառնալու բոլոր պատճառները[3]:

10-րդ դարից սկսած գրաբարը աստիճանաբար դադարում է ընդհանուր հաղորդակցական միջոց լինելուց: Այս նշանակում է, որ գրաբարի անկման պատճառները ոչ թե պայմանավորված են նրա բնական զարգացմամբ, այլ այն տնտեսական, քաղաքական պայմաններով, որոնց մեջ ապրել է հայ ժողովուրդը 6-10-րդ դարերում[4]:

Մենք վերլուծել ենք Հ. Դրասխանակերտցու «Հայոց պատմություն» երկում կիրառված բարդություններն ըստ նրանց բաղադրիչների խոսքիմասային պատկանելության[*]:

«Երկու կամ ավելի հիմնական ձևույթների (արմատների) կամ բառերի կցումով կամ հարադրությամբ կազմված բաղադրությունները, որոնք ունեն մեկ ընդհանուր շեշտ, կոչվում են բարդություններ կամ բարդ բառեր»[5]:

Բարդությունները լինում են՝ վերլուծական և համադրական:

Է.Աղայանը նշում է, որ բարդություն տերմինը տրվում է միայն այն բառերին, որոնք ներկայացնում են երկու կամ ավելի հիմնական ձևույթների միավորումը մեկ բառում[6]:

Բարդությունների մասին խոսել է նաև Մ. Աբեղյանը: Նա գրում է, որ հայերենի բարդ բառերը, ինչպես ընդհանրապես բոլոր բաղադրված բառերը, ծագում են երկու սկզբնապես ինքնուրույն բառերի այնպիսի շարահյուսական կապակցությունից, որ ըմբռնվում է իբրև մի առանձին բառական միավոր, մեկ բառ, մեկ նշանակությամբ[7]:

Ըստ խոսքիմասային պատկանելության՝ բարդության ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ անդամը կարող է ներկայացնել ամեն կարգի խոսքի մաս: Բարդության մեջ իմաստակիր միավորը երկրորդ անդամն է, որն ըստ իր խոսքիմասային պատկանելության, նաև ըստ առաջին անդամի լրացական բնույթի՝ կարող է ունենալ բազմաթիվ իմաստավորումներ:

Գ. Ջահուկյանի կարծիքով հնդեվրոպական բարդությունները ևս երկու տիպի են եղել՝ կենտրոնածիգ, որի դեպքում բարդության իմաստը սահմանա-

---

[3] Ա. Այտընյան, «Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի», էջ134:
[4] Ս. Ղազարյան, «Հայոց լեզվի համառոտ պատմություն», Երևան, 1981, էջ 189-190:
[*] Հ. Դրասխանակերտցու օգտագործած բարդությունները քաղված են հեղինակի «Հայոց պատմություն», Երևան, 1996, Ռեսանողի գրադարան հրատարակությունից:
[5] Ա. Սուքիասյան, «Ժամանակակից հայոց լեզու», Երևան, 1999, էջ 232:
[6] Է. Աղայան, «Ընդհանուր և հայկական բառագիտություն», Երևան, 1984,էջ 268:
[7] Մ. Աբեղյան,«Հայոց լեզվի տեսություն», Երևան, 1965, էջ 168:

փակվում է նրա ներսում՝ բաղադրիչների ընդհանուր իմաստով, և կենտրոնախույս, որի դեպքում բարդությունն ունի նաև լրացուցիչ իմաստ[8]: Առաջին տիպի բարդությունների մեջ մասամբ առկա է բաղադրիչների սովորական շարադասությունը՝ «եղբօրորդի(32), հայրանուն(32): Երկրորդ տիպի բարդությունները հատկացական բնույթի են, այսինքն՝ ամբողջովին առնված ածականներ են, որոնք ցույց են տալիս մի բան ունենալը՝ «անուշահոտ(184)- անուշ հոտ ունեցող», «նանրալեզու(118)» և այլն:

Բարդությունների մեջ հանդես եկող ածանցավոր բաղադրող հիմքերն առանձին քննության չենք առնի, քանի որ նրանց խոսքիմասային պատկանելությունը պայմանավորված է նրանց կազմի մեջ գտնվող ածանցի բնույթով (գոյականակերտ, ածականակերտ և այլն): Դրա համար էլ բարդությունների բաղադրիչների խոսքիմասային բնութագիրը տալիս հենվում ենք SjS(արմատ+հոդակապ+արմատ) և SS(արմատ+արմատ) հիմնակաղապարների և նրանց այն ենթակաղապարների վրա, որոնցում առկա է արմատի հնչյունափոխություն կամ քերականական ձևավորում:

Այսպիսով, SjS հիմնակաղապարի հետ վերցնում ենք SjS, SpjS, SjSp, SjSp, SpjSp, SjS ենթակաղապարները, իսկ SS ենթակաղապարի հետ՝ SS, SpS, SSp, SSp, SpSp ենթակաղապարները:

Բարդության բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը որոշելիս որոշ դժվարություններ են ի հայտ գալիս: Այդ իսկ պատճառով Լ. Հովսեփյանը առանձնացրել է հետևյալ սկզբունքները, որոնց կհետևենք նաև մենք[9]:

ա) Պետք էառաջնորդվել ոչ թե սկզբունքի ծագումնաբանական բնույթով (բայական կամ անվանական), այլ անմիջական սերող հիմքերի խոսքիմասային պատկանելությամբ:

բ) Ելակետային է սկզբնահիմքերի շարահյուսական հարաբերությունը: Քանի որ բայի հետ զուգորդվում են հիմնականում գոյականն ու մակբայը (ոչ թե ածականը), ուստի ընդունվում են Գ+Բ, Մ+Բ կաղապարները: Այս պարագայում անտեսվում է այն հանգամանքը , որ առանձին վերցրած առաջին բաղադրիչը կարող է ածական լինել: Այսինքն՝ գոյականաբար կիրառված ածականը համազոր է գոյականին, իսկ մակբայական կիրառությամբ ածականը՝ մակբային:

---

[8] Գ. Ջահուկյան, «Հայոց լեզվի պատմություն . նախագրային ժամանակաշրջան», Երևան, 1987, էջ 247:

[9] Լ. Հովսեփյան, «Գրաբարի բառակազմությունը», Երևան, 1987:

գ) Առաջնային են նաև բառակազմական իմաստով ու բաղադրիչների միջև եղած իմաստաբերականական հարաբերությունները: Այս սկզբունքը գործում է գոյական-բայ, ածական-բայ երկընտրանքի դեպքում, հատկապես երբ անհրաժեշտ է լինում ածականի գոյականական կամ մակբայական կիրառությունը ճշտել: Օրինակ՝ ամսամուտ (ամսվա սկիզբը) բառում երկրորդ բաղադրիչը գոյական է, քանի որ բաղադրիչների միջև առկա է հատկացուցիչ- հատկացյալ հարաբերությունը, իսկ թփամուտ (թփերի մեջ մտնող) բառում առկա է պարագայական հարաբերությունը, որի հետևանքով «մուտը» բայարմատ է: Եթե բաղադրիչների միջև կան պարագայական հարաբերություններ, ապա գործ ունենք մակբայացված ածականի հետ, իսկ խնդրային հարաբերությունների դեպքում՝ գոյակա-նացված ածականի հետ: օրինակ՝ նորասեր (նորությունն սիրող) բառի մեջ առաջին բաղադրիչը դիտվում է որպես գոյական, քանի որ այն տվյալ բարդության մեջ կողմնակի ուղիղ խնդիր է հանդիսանում, իսկ նորաշեն (նոր շինված) բառում՝ մակբայ, այսինքն՝ առաջին բաղադրիչը հանդիսանում է ժամանակի պարագա:

«Բուն բարդությունների բաղադրիչները միմյանց հետ որոշակի շարահյուսական հարաբերության մեջ են գտնվում, որով և բաղադրվում է բարդության ներքին ձևը»[10]: Այսպես՝ օրինակ՝ հոգեմարտ(52) բառի ներքին ձևն է «հոգու մարտ», որի առաջին անդամը լրացումն է երկրորդի. երկուսը միասին ներկայացնում են հատկացուցիչ- հատկացյալ կապակցություն. այդպես և ոսկիանկար(106) «ոսկե նկար» (ոսկե՝ որոշիչ), իմաստասէր(102) «իմաստություն սիրող» (իմաստություն՝ ուղիղ խնդիր), ոսկեզօծ (102) «ոսկիով օծված (ոսկիով՝ անուղղակի խնդիր), երկնաբարձ(284) «երկինք բարձրացող» (երկինք՝ տեղի պարագա), հարցուփորձ(190) «հարց և փորձ» (համադասական կապակցություն) և այլն:

Բարդությունների բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները լինում են *համադասական և ստորադասական:*

Համադասական հարաբերություն են արտահայտում շաղկապական ու հարակցական հարադրություններից ստացված կցական բարդությունները և հատվածական բարդությունների մեծագույն մասը[11]: Օրինակ՝ անցուդարձ, մեծամեծ(32),տունուտեղ, չարաչար(36) և այլն: Բաղադիչների համադաս հարաբերությամբ բուն բարդությունները քիչ են, ըստ որում եղածներն էլ հոմանիշ կամ մերձիմաստ բաղադրական հիմքեր ունեն: Համադասական բարդությունները

---

[10] Է. Աղայան, «Ընդհանուր և հայկական բառագիտություն», Երևան, 1984, էջ 277:
[11] Նույնը, էջ 277:

ները մեծ մասամբ արտահայտում են իմաստի զորացում՝ սաստկացում, հավաքականություն, միասնություն:

Ստորադասական հարաբերություն են արտահայտում բուն բարդությունների մեծա- գույն մասը, ինչպես և՝ կցական ու հատվածական բարդություններից նրանք, որոնք ստացվել են ստորադասությամբ կապված հարադրությունների ու հատվածական բաղադրությունների բաղադրիչների միավորումով[12]: Օրինակ՝ արևմուտք(=արևի մուտք- հատկացուցիչ-հատկացյալ), ոսկէսանձ(=ոսկե սանձով- որոշիչ-որոշյալ) և այլն:

Հայերենի բարդությունների մեջ, իբրև կանոն, լրացյալն է ստորադասություն արտահայ- տող բուն բարդությունների բաղադրող հիմքը, իսկ կցական և հատվածական բարդությունների մեջ՝ վերջին բաղադրիչը[13]: Այսպես՝ բերված օրինակների մեջ լրացյալ- ներն են՝ -մուտք, -սանձ, իսկ սերող հիմքերը (կցական ու հատվածական բարդությունների նախորդող բաղադրիչ- ները)՝ լրացումներ են, ինչպես՝ արև-, ոսկէ- բաղադրիչները:

«Կան գրաբարից ժառանգված սակավաթիվ բուն բարդություններ, հունարենի պատճենումով կազմված, որոնց բաղադրիչներից առաջինն է լրացյալը»[14], ինչպես մայրաքաղաք (70) բառը, որը գիտակցվում է իբրև «մայր քաղաք», այսինքն՝ մայր բաղադրիչն ընդունվում է որպես գոյական որոշիչ, ուստի և՝ լրացում, իսկ քաղաք-ը՝ լրացյալ:

Բարդության բաղադրիչների միջև կարելի է գտնել նախադասության անդամների միջև եղած գրեթե բոլոր շարահյուսական հարաբերությունները. դրանք կարելի է փոխակերպել շարահյուսական կապակցությունների.

օրինակ՝ հատկացուցիչ-հատկացյալ – ծովեզեր(28), աղախնորդի(84), հայրանուն(32), հոգեմարտ(52), արևմուտք(44) և այլն.

որոշիչ-որոշյալ- ծիրանէփառ(106), ոսկէճամուկ(106), լուսերանգ(310) և այլն:

Բարդությունների բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունից բացի կարևոր է ճշտել, թե ինչ խոսքի մասեր են կերտվում տարբեր խոսքի մասերից գոյացած հիմքերից:

Հ. Դրասխանակերտցու «Հայոց պատմություն» երկում հանդիպել ենք գրեթե բոլոր խոսքի մասերից բաղադրված կաղապարների:

Ա. Գոյականից բաղադրվող կաղապարներ.

1.գոյական+գոյական

---

[12] Է. Աղայան, «Ընդհանուր և հայկական բառագիտություն», Երևան, 1984, էջ 278:
[13] Նույնը, էջ 278-279:
[14] Նույնը, էջ 279:

գոյական(արմատ)+գոյական(արմատ) կաղապարով կազմվում են՝

ա) գոյականներ

այստեղ միացած են գրվում սեռական վերադիրն ու իր գոյականը, որտեղ երկրորդ բաղադրիչը պահում է իր նշանակությունը, իսկ առաջին բաղադրիչն ունի սեռականի (հատկացուցչի), ածական վերադրի և այլ հարակից նշանակություններ[15]:

Բերենք համապատասխան օրինակներ- քեռորդի(10), քարանձաւ(20), ծովեզեր(28), եղբորորդի(32), տեառնեղբայր(158), քաղաքագիւղ(74), նախարարակոյտ(162),իմաս- տասէր(102), պարտավճար (142), փայտազարկ(78) և այլն:

Հ. Դրասխանակերտցու լեզվում գերազանցում են բաղադրիչների միջև հատկացուցիչ- հատկացյալ հարաբերությամբ կազմությունները.

օրինակ՝ քեռորդի(10), եղբորորդի(32), հայրանուն(32), մարզպան(66), տեառնեղբայր (158), անձնամարտ(158), մահառիթ(222), աստուածակարգ(42) և այլն:

Ավելի քիչ են որոշիչ-որոշյալ հարաբերությամբ կազմությունները.

օրինակ՝ քաղաքագիւղ (74), ոսկէփունջ (106), ոսկիանկար (106), ծիրանէփառ 106), ոսկէճամուկ(106), ոսկէսանձ(294), լուսերանգ(350) և այլն:

Ոսկիանկար բառի մեջ ի+ա>ե հնչյունափոխություն չի կատարվել: Հ. Դրասխանակերտցու լեզվում ի+ա հնչյունափոխությունը հիմնականում արտահայտվում է ոչ թե *ե*, այլ *է* տառով:

Հազվադեպ ենք հանդիպել բաղադրիչների համազոր հարաբերությամբ օրինակների.

օրինակ՝ դասակարգ(50), հարցուփորձ(190), հարցափորձ(130) և այլն:

բ) կազմվում են նաև ածականներ.

օրինակ՝ կենցաղօգուտ(342), աստուածակարգ(42), կուսակրօն(48), իրաւախորհ(50), քրիստոսադրոշմ(52), տղայադիտակ(78), աւարտահասակ(104), ոսկեհուռն(146), մահա- հոտ(218), հրապարակագոյժ(226), մարգարէաբարբառ(236), աստուածապսակ(170), երկնաբարձ (284), լուսաշաւիղ(284), ղամբարափայլ(290), օգտածարաւ(330) և այլն:

2.Գոյական+ածական

Գոյական+ածական կաղապարով կազմվում են միայն ածականներ. Բարդության մեջ երկրորդ բաղադրիչը պահում է իր հիմնական նշանակությունը, առաջին բաղադրիչը երկրորդի լրացումն է: Շարահյուսական կապակցու-

---

[15] Մ. Աբեղյան, «Հայոց լեզվի տեսություն», Երևան, 1965, էջ 178:

թյամբ փոխակերպման դեպքում նրանց իմաստն արտահայտվում է հոլովաձևերով:

Օրինակ՝ խաչանման (խաչի նման)(60), աստուածահաճոյ(64), աստուածապայծառ (350), կամակոր(86) և այլն:

3. Գոյական+բայարմատ

Այս կաղապարով բարդությունները Հ. Դրասխանակերտցու «Հայոց պատմության» մեջ գործառական տեսակետից առաջին տեղն են գրավում:

Գոյական (արմատ)+բայարմատ կաղապարով կազմվում են գոյականներ ու ածական- ներ: Սրանք հիմնականում հանդես են գալիս ենթակայական, երբեմն էլ հարակատար դերբայի իմաստով: Որևէ գործողություն կատարելը դիտվում է որպես հատկանիշ: Բերենք օրինակներ՝ քարակոփ (քարից կոփված)(32), կենդանարար (կենդանություն արարող) (64), քրիստոսընկալ (Քրիստոսն ընկալող)(76), խրատտու (խրատ տվող)(192), կենարար (250), շողոմարար(290), ջրահեղձ(14), ոսկիապատ(42), լուսասփիւռ(64), լծադիր(24), հայրենատուր(18) և այլն:

Հաճախ են հանդիպում Գ+Բ կաղապարով կազմված այնպիսի ածականներ, որոնց մեջ արտահայտվում է կրավորականությունը: Օրինակ՝ բանապաճոյճ(6), տնկակոտոր(164), խրատտու(192), ջրահեղձ(114), հայրենատուր(18), ծեռակերտ(32), ոսկիապատ(42), ոսկեզօծ(200), դիապատիկ(100), բոցակեզ(276), կենսատու(284) և այլն:

Բաղադրության առաջին բաղադրիչը երկրորդի լրացումն է: Հաճախ առաջին բաղադրիչը հնչյունափոխվում է: Օրինակ՝ դիմագրաւ(218), միգապահ(224), ջրհեղեղ(230), քրտնահար(242), պտղաբեր(248), հրացայտ(294), փշաբեր(320), սրակոխ(340) և այլն:

Ինչպես վերը նշեցինք Գ+Բ կաղապարով կազմվում են նաև գոյականներ: Սակայն են այն գոյականները, որոնք կազմվել են որպես այդպիսին: Օրինակ՝ ծեռնարկ(80), աշխար- հագիր(34), ջրհեղեղ(230) և այլն:

Հ. Դրասխանակերտցու երկում մեծամասնություն են կազմում այն գոյականները, որոնք առաջացել են սկզբնական ածականներից: Որոշ ածականներ կարող են գործածվել իբրև գոյականներ (երկարժեք խոսքի մասեր են):

Նշենք համապատասխան օրինակներ՝

ոգեպահ(52), բանտարկեալ(124), հրծիգ(256), օրէնսդիր(338), մարդասպան(152), բանաստեղծ(6), թագադիր(28), թիկնապահ(28), կուսակալ(28), ջրաբաշխ(40), գործակալ (110), ոմմնացան(152) և այլն:

Վերը նշված օրինակները միաժամանակ և՛ գոյականներ են, և՛ ածականներ:

Հեղինակի լեզվում հանդիպել ենք «շողոմարար» (290) բառին, որի առաջին բաղադրիչը չնայած ածական է, սակայն հանդես է գալիս ոչ թե իր բուն խոսքիմասային նշանակութ- յամբ, այլ գոյականացված: Այստեղ կարելի է նկատել բառակազմական գաղտնի քայլ՝ գոյականակերտ –ութիւն ածանցի կցում, որը բառաբարդման հետևանքով ընկել է՝ շողոմութիւնարար- շողոմարար:

Բ. Ածականից բաղադրվող կաղապարներ

1)ածական+ գոյական կաղապարով կազմվում են

ա) գոյականներ՝ մեծամարտիկ(76), բարձրավանդակ(120), ջերմա-հովիտ(142), հարթա-հատակ (220), խորածոր(292), դժուարաժայռ(294) և այլն:

բ) ածականներ՝ հաւասարակարգ(12), բարձրագագաթն(18), սպիտակա-փառ(18), քաջա-փայլ(20), առատածեռն (20), լիահանճար(23), մեծապա-տիւ(24), խոհեմամիտ(24), մեծամիտ(24), փափկավանկ(56), բազմահանդէս(76), նանրալեզու(118), երկայնագոգ(142) և այլն: Ա+Գ կաղապարով բարդություն-ները հանդես են գալիս որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերությամբ:

Հ. Դրասխանակերտցու «Հայոց պատմություն» երկում հազվադեպ են հանդիպում Ա+Գ կաղապարով կազմված գոյականները:

2)Ա+Ա կաղապարով կազմվում են ածականներ: Այս կաղապարի բաղադրիչ-ների միջև գոյություն ունի համազոր հարաբերություն:

Նշենք օրինակներ՝ գեղեցկայարմար(30), մեծամեծ(32), պերճապայ-ծառ(34), չարաչար (36), չքնաղագեղ(94), խորախիտ(166), հարթայարմար(206), դիւրախրոխտ(334), առաքինահրաշ(350), հապճեպ(6) և այլն:

Այս կաղապարով բարդությունները ավելի փոքր տեղ են գրավում Հ. Դրասխանա- կերտցու «Հայոց պատմություն» երկում:

3)Ա+Բ կաղապար հնարավոր է միայն այն դեպքում, երբ մի կողմից տեղի է ունենում ածականի և մակբայի նույնացում, այսինքն՝ ածականի մակբայական կիրառություն՝ սնավատակ(16), պերճապաճոյճ(26), չարախօս(58), պայծառա-բարած(64), գեղեցկադիր (74), պայծառակերտ(74), հաստահեղուս(86), չարա-դաւան(102), ցրտահար(106), չարիմաց (248), չորաբեկն(156) և այլն, մյուս կողմից՝ ածականի և գոյականի նույնացում, այսինքն՝ ածականի գոյականա-կան կիրառություն[16]: Այս տիպի օրինակների հազվադեպ ենք հանդիպել՝ բարեզգաց(8), բարեկամ(22):

Ածական+բայահիմք կաղապարով կազմվում են ածականներ: Հանդիպել ենք նաև Ա+Բ կաղապարով այնպիսի օրինակների, որտեղ գոյականը ունի

---

[16] Լ. Հովսեփյան, «Գրաբարի բառակազմությունը», Երևան, 1987:

ածականական կիրառություն: Օրինակ՝ խաւարազգած(168), հանդիսադիրք(164):

Գ. Թվականներից բաղադրվող կաղապարներ.

1.Թվական+գոյական կաղապարով կազմվում են ածականներ: Այս կաղապարով կազմված բարդությունների բաղադրիչների միջև նույնպես գոյություն ունի որոշիչ- որոշյալ շարահյուսական հարաբերությունը:

Օրինակ՝ երեքթևեան(18), միատարր(76), երկփեղկ(174), երկսայր(250), կէսսարկաւագ (50):

Հ. Դրասխանակերտցու «Հայոց պատմություն» երկում առկա են նաև թվական+գոյական կաղապարով կազմված գոյականներ: Օրինակ՝ հազարապէտ(28), միանձունք(78), միապէտ(16):

2.Թվական+ածական կաղապարով կազմվում են քիչ թվով ածականներ: Հեղինակի երկում հանդիպել ենք միայն մեկ օրինակի՝ միահամուռ(268) :

3.Թվական+թվական կաղապարով կազմվում են միայն թվականներ: Նշենք հեղինակի երկում հանդիպած համապատասխան բաղադրյալ թվականները՝ երկուհազար(16), երկուհարիւր(16), երեքտասան(30), հինգհարիւր(68) և այլն:

4.Թվական+բայ կաղապարով վկայված է մեկ ածական՝ *միածին (68)*:

5.Թվական+մակբայ կաղապարով հանդիպել է *միանգամ(8)* մակբայը:

Դ. Բայարմատից բաղադրվող կաղապարներ .

1. բայ+գոյական կաղապարով կազմվում են գոյականներ և ածականներ: Հեղինակի երկում բայ+ գոյական կաղապարով վկայված են երեք ածականներ՝ ընթերցասէր(14), պճնազարդ(104), խեղճամահ(112), և երկու գոյականներ՝ միաբան(90), փութամահ(287):

2. Բայ+բայ կաղապարով կազմվում են ածականներ՝ շինանիստ(6), սպառսպուռ(10), հատակտուր(10), թաւալգլոր(128), հաղորդակից(90), տրիտուր(332):

Բայ+բայ կաղապարով կազմվում են նաև գոյականներ: Հեղինակի երկում առկա է նմանատիպ միայն մեկ օրինակ՝ ստուգագէտ(50):

Ե. Դերանուններից բաղադրվող կաղապարներ.

1.դերանուն+գոյական կաղապարով կազմվում են ածականներ՝ ինքնիշխան(26), գոյականներ՝ այլազգ(16), այլաբան(16):

Հեղինակի լեզվում առկա են նաև այս կաղապարով կազմված մակբայներ: Այստեղ առաջին բաղադրիչ են հանդիսանում ցուցական դերանունները՝ ուղիղ և քերականական ձևավորումով: Օրինակ՝ այսօր(36), այնուհետև(16), այսուհետև(16), յայնմհետէ(22), այսքան(24), այսչափ(14):

2. Դերանուն+ բայ կաղապարով կազմվում են ածականներ: Հեղինակի երկում հանդիպել ենք երկու օրինակ՝ բազմաշխատ(78), ինքնակալ(52):

3. Դերանուն+ դերանուն կաղապարով կազմված ունենք միայն մեկ գոյական՝ այլոք(14):

Դերանուն+ածական, դերանուն+ մակբայ կաղապարներով բարդություններ Հ. Դրասխանակերտցու երկում չենք գտել:

Զ. Մակբայներից ու շաղկապներից բաղադրվող կաղապարներ.

1.մակբայ+գոյական կաղապարով նույնպես կազմվում են գոյականներ՝ ներքինապետ(102), և ածականներ՝ բազմապատիւ(46), լիաբերան(182):

2. Մակբայ+ածական կաղապարով կազմված բարդությունները սակավ գործածություն ունեն: Հեղինակի երկում առկա են երկու օրինակներ՝ բազմահարուստ(22), բազմապայծառ (86): Այս կաղապարով կազմվում են ածականներ:

3.Մակբայ+ բայ կաղապարով կազմվում են ածականներ՝ բազմախողխող(10), բացերևակի(14), արժանընկալ(42), մշտնջենազուարճ(44), գաղտնագնաց(86), յանկարծահաս(190), կիսակտուր(196), բազմածախ(200), բազմայորդոր(260) և այլն, և գոյականներ ՝ կողմնակալ(28), բազմաբեր(136):

Մակբայ+մակբայ, մակբայ+ շաղկապ կաղապարներով բարդություններ չենք նկատել հեղինակի երկում:

4. Շաղկապ+շաղկապ կաղապարով կազմվում են շաղկապներ: Հեղինակի երկում առկա է միայն մեկ օրինակ՝ թէպէտև(6):

5. Շաղկապ+ածական կաղապարով հանդիպել ենք մեկ հարցահարաբերական դերանվան ՝ իսկապէս(6):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բարդությունների ճնշող մեծամասնությունը տարբեր խոսքի մասերի միացման արդյունքում ստացված ածականներ են: Ածականներից հետո երկրորդ տեղում են գոյականները: Մյուս խոսքի մասերը՝ մակբայներ ու շաղկապներ, ավելի սակավ են:

Բարդությունների բաղադրիչների միջև հիմնականում առկա են որոշիչ – որոշյալ, հատկացուցիչ – հատկացյալ շարահյուսական հարաբերությունները:

Այժմ ներկայացնենք վիճակագրական պատկերը.

Գ+Գ	Գ+Ս	Գ+Բ	Ս+Գ	Ա+Ս	Ս+Բ	Թ+Գ	Թ+Թ	Թ+Ս	Բ+Գ
100	25	190	70	16	45	10	15	1	3
Բ+Բ	Դ+Գ	Դ+Բ	Դ+Դ	Մ+Գ	Մ+Ս	Ս+Բ	Շ+Շ	Շ+Ս	
10	15	2	1	5	2	15	1	1	